ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

22.06.2021թ.
Ժամը 15^{00}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության պետ, փոխգնդապետ՝ Կ. Գրիգորյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԳՎ ՏԱ վարչության 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ՝ Ա. Սիմոնյան,
ՀՀ ՋՈՒ ՊԳՎ ուսումնանյութական ապահովման բաժնի, պլանավորման և հաշվառման բաժանմունքի պետ, փոխգնդապետ՝ Ա. Հալաջյան,
ՀՀ ՋՈՒ ՊԳՎ ուսումնանյութական ապահովման բաժնի, շահագործման և սարքավորումների նորոգման բաժանմունքի ավագ սպա, փոխգնդապետ Լ. Արշակյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ՝ Գ. Պողոսյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Պողոսյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Պողոսյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Հակոբ Առաքելյան» Ա/Ձ
2	«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

(Գ. Պողոսյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի և «Հակոբ Առաքելյան» Ա/Ձ-ի՝ հայտերով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին): Մասնավորապես՝

ԵՎ «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի և «Հակոբ Առաքելյան» Ա/Ձ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-երում՝ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում նշված են՝ 1.Ղեկավարման համակարգ՝ իր մեջ ընդգրկում է՝ համակարգիչ (համակարգչի իրան՝ սնուցման բլոկը ոչ պակաս 550W հզորությամբ TopCool 680 PSU 550W: Պրոցեսոր ոչ պակաս Core i3-4160, 3.6 GHz, Cooler s 1150; օպերատիվ հիշողություն DDR3 տիպի ոչ պակաս 6GB 1600Mhz, կոշտ սկավառակ կամ SSD ոչ պակաս 500GB, SATA 6Gb/s, լազերային սկավառակակիր DVD-RW, ստեղնաշար, մկնիկ, մոնիտոր LCD, անկյունագիծը ոչ պակաս 21", պատկերի տեսանելի չափը ոչ պակաս 21": (կամ համարժեք)) արտահայտությունները: Քանի որ առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի հատկանիշները, բացառելով տարակերպ մեկնաբանությունը, անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերը՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը, որպեսզի գնահատող հանձնաժողովը հնարավորություն ունենա գնահատելու առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը 22.06.2021թ. որոշեց կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները: 24.06.2021թ. շարունակելով նիստը գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ բոլոր մասնակիցները, սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները: «ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի և «Հակոբ Առաքելյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Պողոսյան)

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակից.

Հ/Հ	Ապրանքի անվանում	Հ/Մ	Քանակ	Նախահաշվային ընդհանուր գին	«Հակոբ Առաքելյան» Ա/Ձ-ի առաջարկ		«ՆԻԻՊ-ԱԼՖԱ» ՓԲԸ-ի առաջարկ		Եզրակացություն
					Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ-ով	Գինը առանց ԱԱՀ	Գինը ԱԱՀ ով	
1	**հրաձգության ուղղություն** (Նոր տեխնոլոգիաներով հրաձգության ուղղության լրակահավորում)	լրակազմ	1	9 800 000	9495000	9495000	9800000	9800000	«Հակոբ Առաքելյան» Ա/Ձ
2	**հրաձգության ուղղություն** (Նոր տեխնոլոգիաներով հրաձգության ուղղության լրակահավորում)	լրակազմ	1	9 900 000	9495000	9495000	9900000	9900000	«Հակոբ Առաքելյան» Ա/Ձ
3	**հրաձգության ուղղություն** (Նոր տեխնոլոգիաներով հրաձգության ուղղության լրակահավորում)	լրակազմ	1	9 400 000	9090000	9090000	9400000	9400000	«Հակոբ Առաքելյան» Ա/Ձ

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում բանակցություններ չեն կազմակերպվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Գ. Պողոսյան)

4.1 29.06.2021թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչվեց «Հակոբ Առաքելյան» Ա/Ձ-ն:

4.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել նիստի արդյունքները և անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Պողոսյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-2/3» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)՝	Կ. Գրիգորյան
Գնահատող՝	Ա. Սիմոնյան
Գնահատող՝	Ա. Հալաջյան
Գնահատող՝	Լ. Արշակյան
Գնումները համակարգող՝	Գ. Պողոսյան